ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 34-Ն որոշման համարակալումը սխալ է կատարված:

Որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 11-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափում՝ «50%» թիվը փոխարինել «25%» թվով, «Երեք հազար» բառերը՝ «Երեք հարյուր» բառերով, իսկ 6-րդ ենթակետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափում՝ «25%» թիվը՝ «10%» թվով: 17-րդ կետի 2-րդ ենթակետի համար պետք է սահմանել տեղական տուրքի կոնկրետ դրույքաչափ:

Որոշմամբ սահմանված N2 հավելվածի 7-րդ և 9-րդ կետերը սխալ են համարակալված: Բացի այդ, 7-րդ կետի 7.1 ենթակետում հարկավոր է կիրառել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, իսկ 7.3-րդ ենթակետում՝ 14-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վճարներից միայն մեկը:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
06.02.2020թ.